ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝ Արմեն Գևորգյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Չեխիայի Հանրապետություն (ՉՀ), ք. Պրահա 2023 թվականի նոյեմբերի 28-30

4. Հրավիրող կողմը՝ ՉՀ ֆինանսների նախարարություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցել «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ) ներդրման օպտիմալ լուծումների մեթոդներ» թեմայով ճանաչողական այցին/փորձի փոխանակմանը:

6. Քննարկված թեմաները՝

1. ՉՀ հանրային ծառայությունների թվայնացում. պետական համակարգի թվայնացման ճարտապետությունը. E-government
2. ՉՀ Թվայնացման և տեղեկատվության գործակալության իրավասությունների շրջանակը, կառուցվածքը, առաջնահերթությունները և կառավարումը
3. ՉՀ էլեկտրոնայացման փորձ. Էլ-գնումների համակարգ. NEN և E-ZAK էլ. գործիքներ
4. ՉՀ հանրային ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգեր. Պետական գանձապետական ինտեգրացված տեղեկատվական համակարգ (IISSP)
5. IISSP կառուցվածք, ճարտապետություն
6. IISSP տեխնիկական նկարագիր, շահագործում և սպասարկում, զարգացման հեռանկարներ
7. IISSP առանձին համակարգեր. բյուջետավորում, գանձապետարան, հանրային հատվածի հաշվապահական հաշվառում
8. IISSP առանձին համակարգերի նկարագիր, ինտերֆեյսեր, դրանց կիրառման օրինակներ

7. Հանդիպումները, ելույթները՝

Հանդիպումներ են եղել ՉՀ Թվայնացման և տեղեկատվության գործակալության ղեկավար Մարտին Մեսռսմիդի հետ, դրա գլխավոր ճարտարապետ Թոմաս Միլեցի, IISSP համակարգի գլխավոր ճարտարապետ Թոմաս Ցեռվիի, ինչպես նաև ՉՀ ֆինանսների նախարարության Պետական Բյուջեի դեպարտամենտի տնօրենի տեղակալ Լենկա Կուբիցկովայի հետ. Երկկողմ ձևաչափով քննարկվել են 2 երկրների հանրային

ֆինանսների կառավարման համակարգերի թվայնացման ճանապարհին հանդիպող խնդիրները, ռիսկերը և դրանց հաղթահարման ուղիները:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հետագա համագործակցություն՝ երկու երկրների հանրային ֆինանսների կառավարման համակարգերի թվայանացման փորձի փոխանակման նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀՀ ՖՆ ԿՖԿՏՀ ոլորտում աջակցություն տրամադրող խորհրդատու կազմակերպության՝ «Հարմոնիա» հիմնադրամի ղեկավարի հանդիպում ՉՀ համապատասխան ՏՏ մասնագետի/ճարտարապետի հետ:

Գործուղվող՝

ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական
Արմեն Գևորգյան

(Ստորագրություն)

04 դեկտեմբեր 2023թ.